

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, ՕԳՈՍՏՈՍ 14, 1931

ԹԻԻ 14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՃԻՇԴ ԴԱՏԵՆՔ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՆՏՕՆԻՆ ՄԷՋ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՆ. ԱՄՓ. ՎԵՐ.Յ.ՇՆՈՐՀՕՔԵԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ ԲՐՈՖ. Ջ. ՊԷՋՃԵԱՆ
ԲԻԻՐՏԻՍՏԱՆԻ ԱԻԵՏ. ԳՈՐԾԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Ղ. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ
ՖՈՐՏԻ ԴԱՂՏՆԻՔԸ Տ. Ճ. Խ.
ԴԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ ՔԱՂԵՅ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼ

ԱԴԱՄԱՆԴԵԱՅ ԿԵԱՆՔԷՆ ՓՇՈՒՐՆԵՐ
ԻՆՋ ՈՐ ԻՆԾԻ ՊԷՏՔ Է
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԷՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՐԿՐԱԴՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ե. Ք. ԶԱՆԻՑԻ ԷՋԸ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՂԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, ճարեկան բաժնեգրից 150 դրուշ սուրի։ Սուրիոյ համար, և մէկ ու կէս տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար։

Յօդուածներու բնագիրները չեն դրուելուի բթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ։ Հնրատարակուող յօդուածներու համար պէտք է զրկել փոստի ծախսը։

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկնով, գիւրընթիւնի և մաքուր կերպով։

ԱՊԱՀՈՎ

ԱՆՈՒՇ ԼՈՒԾՈՂԱԿԱՆ

MCNESS LAXATIVE CANDY

Ծնողներ, մի քոյստեիք որ ձեր զաւակները պնդութենէ քառասկին։

Mcness Laxative Candy ն տիպար լուծողական մըն է ճիշդ շոգուլայի նման։ Մանուկները անկէ չափազանց կ'ախորժին որովհետեւ անուշիկէն մը ուտելու չափ հաճելի կը գտնեն զայն։ Զօրութիւն լուծողական մըն չէ, այլ մեղմ, և սեէ յոգնութիւն չի պատճառեր մարմնին։ Կատարելապէս տպահով է չափազանց փափկակալմ մանուկի մը իսկ գործածութեան։

Մանուկները առհասարակ լուծողականէ կը խրտչին, հետեւաբար անոնց մէջ պնդութենէ տառապողներու թիւը քիչ չըլլար։ Հետեւանք — մարմնական և մտային տկարութիւն։

Ահա լուծողական մըն որ ձեր զաւակները ամենայն յօժարութեամբ պիտի առնեն։

Ձանացէք որ ձեր տուններուն մէջ միշտ գտնուի այս տիպար լուծողականը։

Կարելի է գիմել բոլոր յայտնի գեղարաններուն։

ՄԵՂՄ

ԱԺԱՆ

ՍՏԱՑԱՆՔ

ԿԱՄՔ, Պաշտօնական ամսաթիւթ «Որդիք Հայաստանեայցի», ազգային, գրական, գիտական. բաժնեգրին՝ տարեկան 1 տոլար, վեցամսեայ 50 սէնթ։ հասցէ՝ 150 West Larned St., room 210, Detroit, Mich.

LE FOYER, Ֆրանսայի Հայ գաղթականներուն օրկանը, ամսաթիւթ, տարեկան բաժնեգրին է՝ մասնաւորներու 100 ֆրանք, ժողովուրդին 25 ֆրանք։ Հասցէ՝ 208 bis, Rue La Fayette, Paris (10e)։



ՓՈՐՁԻ

ՓՈՐՁԻ

MCNESS SHAVING CREAM

Ինչո՞ւ կը չարչարես երեսիկները կարելի է ածիլուելու գործողութիւնը չափազանց դիւրացնել։ Mcness մօրուք կուղղցնող իւղը թող զայն ընէ քեզի համար։

Կը գտնուի բոլոր յայտնի գեղարանները։

ՀԱՃԵԼԻ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, ՕԳՈՍՏՈՍ, 14 1931

ԹԻԻ 14

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՃԻՇԴ ԴՈՏՆԵՔ

Մարդու համար կարծես բնական միտում մ'է մոռնալ անցեալի իրական դէմքը և բնոյթը, զայն գաղափարականացնել, լուսաւոր գիծերով զայն երեւակայել: Իսկ միւս կողմէն մարդ սովորական հակում մ'ունի ներկան նստացնելու, ընթացիկ կեանքը աւելի ապերժանիկ, տառապալից և ինկած նկատելու, մանաւանդ կրօնական և բարոյական մարպերու մէջ:

Անշուշտ պէտք է ընդունիլ որ աշխարհ՝ կեանքի բոլոր մարզերուն մէջ աննման տալանապ մը կ'անցնէ: Մասնաւորապէս ներկայ եկեղեցական կազմակերպութիւններու, կրօնական ըմբռնումներու, բարոյական չափանիշերու, հոգեւոր արժէքներու դէմ հակառակութիւնը սաստիկ հանգամանք մը առած է: Բայց ներկայ կացութեան մասին շատեր արտայայտուելու ատեն սա երկու սխալները կը գործեն: Նախ կրօնական անտարբերութիւնը և կրօնքի դէմ թշնամութիւնը պէտք եղածէն աւելի ընդհանրացած կը ներկայացնեն: Բոլոր դպրոցները, փրօֆեսորները, գիտունները, անհաւատ կը կարծեն, ընտանիքի և եկեղեցիի մէջ քրիստոնէական կեանքը ամէն տեղ բոլորովին անհետացած կ'ենթադրեն: Եւ երկրորդ՝ ներկան անցեալին հետ բաղդատելով կրօնապէս, բարոյապէս, աւելի ինկած կը նկատեն:

Սյա երկու գաղափարներն ալ սխալ են: Մարդիկ անցեալին մէջ շատ ան-

գամ իրենց դարուն ապականութեան, բարոյական կրօնական անկումին մասին խօսելով զանիկայ աննախընթաց և անգերազանցելի գտած ին: Ասոր իբր լուսագոյն մէկ օրինակը ԺԸ. դարու վերջէրուն աշխարհիս պարզած վիճակն է: Հեղինակ մը՝

ԱՄԵՐԻԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

Ամերիկայի վիճակը սապէս կը նրկարագրէ:

«Պատերազմը սոսկալի հարուած մը տուաւ եկեղեցիներու հոգեւոր կեանքին: Լէոնարտ Պէյքըն յետեւողափական շրջանի մասին կը գրէ թէ «ԺԸ. դարու վերջին տարիները՝ Ամերիկեան եկեղեցիի պատմութեան մէջ հոգեւոր կեանքի մակարդակը իբր ամենացած աստիճանին վրայ կը գտնուէր:»

Մեր գոլէճները, որոնք եկեղեցիի և պետութեան համար հոգեւոր առաջնորդներ արտագրելու նպատակով գոյութիւն առած էին, անհաւատութեան բոյներ դարձած էին: Փրինսթըն Գոլէճ 1792ին միայն մէկ ուսանող ունէր որ քրիստոնէութիւնը կ'ընդունէր: Ուրիւնք և Մէյքրի Գոլէճ Փրանսական թահաւատութեան կեղբոն մը եղած էր: Լայմըն Պիչլըրի կարծիքին համեմատ «ԵՏՄԼ ամէնէն աստուածութեան վիճակին մէջ կը գտնուէր: Գոլէճի մատուռը գրեթէ գոյութիւնէ դադարած էր: Ուսանողներուն մեծ մասը սկեպտիկ էին, խաղաբարներու թիւը շատ մեծ էր: Շատ մը սենեակներու մէջ գիւնի և խմիչքներ կը պահէին: անժուժկալութիւնը, աշխարհիկ կեանքը, բաղդատը, օրինազան-

յութիւնը սովորական բաներ էին : Իմ առջեւ գտնուող աշակերտներու մեծ մասը անհաւատներ էին , և զիրար Վոլ-դէրի , Բուսոյի , Տ'ալամպէրի և սւրիշ-ներու անուններով կը կոչէին :

Մեր ազգային գոյութիւնը վտանգուած էր : Ճորճ Վաշինկթըն ժամանակի հոսանքը տեսաւ և ըսաւ թէ հաւա-րապետութեան ապահովութեան համար այդ ժամանակ շատ աւելի վտանգներ կը տեսնէր քան այն տառն էր յեղա-փոխական պատերազմի ամէնէն մութ ժամանակներուն մէջ կը գտնուէր :

Եկեղեցական ոյժերը պայքարի մէջ ընկրկած էին : Մեթոսականները , զոր օրինակ , 1793 - 1795ի միջոցին 11,600 անդամ կորսնցուցած էին : Բրիստոնէ-ութիւնը տապալելու համար ընկերու-թիւններ կազմակերպուած էին : »

Այս մէկ օրինակը , որ մ.Ը. դարու վերջը տեսնուած կրօնական և բարո-յական վիճակը կը պատկերացնէ , ներ-կայ ժամանակներու գրէթէ մէկ նկա-րագրութիւնն է : Եկեղեցին նման տագնապնիր , մասնակի կամ ընդհա-նուր , շատ անգամներ տեսած և անոնց մէջէն յաղթական դուրս ելած է : Այդ տագնապնիրուն յաջորդած է հոգեւոր արթնութիւն : Այդ տագնապնիրը ազ-գարար նշաններ են յուցնելու թէ ժո-ղովուրդները հոգեւոր անօթութիւն մը կ'զգան և թէ պաշտօնական եկեղեցին կերպով մը անկարող կը գտնուի այդ քաղցը գոհացնելու , հոգեւոր սնունդ տալու : Ուստի եկեղե-ցին պէտք է ինքզինքին պայ կացու-թիւնը լաւ կշռելու , իր տկար կէտը լաւ ճշդելու , և վերարթնալով նոր ճի-գիր թափելու մարդկութիւնը փրկելու համար :

1800 թուականներուն մեծ արթնու-թիւնը յաջորդեց կրօնական և բարոյա-կան անկումին : Զերմ հաւատացեալ-

ներ փոքր խումբերով աղօթքի սկսան , զանազան հոգեւոր ընկերութիւններ կազմուեցան : «Ամէն ամսուան երրորդ Շաբաթ օրը յատկացուցին ծոմապա-հութեան և աղօթքի , որ Ս . Հոգին պայ : Նոյն նպատակին համար Շաբաթ օրը արեւը մարը մտնելու ատեն և կիրակի արեւածագին կէս ժամ յատկացուցին : Եւ Աստուած պատասխանեց . և ամէն տեղ արթնութիւններ ծայր տուին :

Ներկայիս արթնութեան նշաններ անպակաս են ամէն տեղ : Եկեղեցին և մասնաւորապէս անհատ հաւատացեալ-ներ պէտք է այս ուղղութեամբ գոր-ծեն : Ներկայ եկեղեցիին գերազոյն խնդիրը հիմնապաշտութեան և արդիա-պաշտութեան հակամարտութիւնը չէ : Ո՛չ հիմնապաշտութիւնը և ո՛չ արդիա-պաշտութիւնը պիտի փրկէ եկեղեցին և աշխարհը : Արդիապաշտութիւնը անա-կացած է , իսկ հիմնապաշտութիւնը՝ ժո-մանակավրէպ : Հիմնապաշտութիւնը և արդիապաշտութիւնը մարդկային մտքի ծնունդներն են . և իբր այդ արժէք ու-նին միայն : Ինչ որ եկեղեցին կը կարօտի ինչ որ աշխարհին պէճ է , զաղափար չի այլ կենդանի Բրիստոնէի* և թէ Բրիստոն-տիւրապետող ըլլար մեր եկեղեցիներուն մէջ , մեր եկեղեցական քրիստոնէա-կան կեանքին երեւոյթները հիմա տարբեր կերպարանքով մեզի պիտի ներկայանային :

Թէ ի՞նչ է Բրիստոնտի կեանքին հիմ-նական կէտը , որ ներկայիս կը պակսի մեր մէջ , շատ լաւ կը բացատրուի Ճա-րոնցի Թոյոհիքօ Բակաւայի* սա պաղա-փարներուն մէջ :

«Յիսուսի՝ կրօնքը խաչի կրօնքն է , այսինքն փրկագործութեան : Աղօթքով ապրի՝ Աստուծոյ շարունակ ոյժ խնդ-րելով և ստանալով՝ և ապա այս ոյժը սիրոյ նոր արարքներու փոխակերպել-ուհա այս է Յիսուսի կրօնքը :

Խաչը՝ «Աստուծոյ թագաւորութիւն»ը

շարժումին շարժիչ ոյժն է։ Այսինքն
այն իրականութիւնը թէ մեզի համար
մեռաւ։ Մենք անարժան ենք այս
թանկագին իրողութեան։ Այդ սէրէն
մղուած անկարելի է որ Քրիստոսի
արիւնին և մահուան ժառանգակից
չըլլանք։ Այս խաչը գայթակղութեան
քար մըն է Յոյներու, Հրեաներու, Ամե-
րիկացիներու, Անգլիացիներու, բայց
անիկայ սիրոյ մեծ յայտնուումն է մեզի
որ Աստուծոյ կը պատկանինք։

Կարգ մը Ճարտնցիներ Աստուծոյ մա-
սին խօսիլ կը սիրեն։ Բայց Քրիստոսէ
չին ախորժիր։ Ուրիշներ Քրիստոսէ
կ'ախորժին բայց խաչը չեն սիրեր։ Մո-
տերս Շինթոյականները ինծի իրենց շը-
նորհակալութիւնը յայտնեցին Աստու-
ծոյ Թագաւորութեան Շարժումին հա-
մար, և Պուտոյական պաշտօնական
թերթը կը գովէ այս շարժումը։ Բայց
եթէ այս Աստուծոյ Թագաւորութեան
Շարժումը՝ Քրիստոնէական շարժում
կոչուէր անոր պիտի հակառակէին։
Եթէ լսուէր թէ անիկայ խաչին մէկ
շարժումն է անոնք պիտի կանչէին։
«Ինչ յիմարութիւն», և պիտի հեղինէին։

Եւ սակայն Քրիստոս ինքը Աստուծոյ
Թագաւորութեան Շարժումին կեդրոնը
կը կենայ, և Քրիստոսի կեդրոնը կը կե-
նայ խաչը։ Այս իրողութեան վրայ
խորհրդակցինք։

Արդի եկեղեցիները որ խաչը կը մոռ-
նան, ջրուած և անհատապաշտ են։ Ա-
նոնք որքան խաչը կը մոռնան Աստու-
ծած այնքան կը պատժէ զանոնք։
Տասներորդ դարուն քրիստոնէութիւ-
նը խաչը մոռցաւ։ և ան մահմեդական
նաթիկան կողմէն հալածուեցաւ։ Ժժ.
դարուն երբ ան դրամապաշտութեան
անձնատուր եղաւ Քարլ Մարքսի յար-
ձակումին ենթարկուեցաւ։ Փառք
կուտամ Աստուծոյ Մարքսի այս յարձա-
կումին համար։ Մարքսականութիւնը
քրիստոնէութիւն չէր, այլ՝ պատժողա-

կան ազգարարութիւն։ Եթէ քրիստո-
սի խաչը եկեղեցիին կողմէ կատարեալ-
պէս ընդունուէր, Մարքսականութեան
երեւան զալուն համար առիթ մը երբեք
չպիտի տրուէր։

Սովորական բայց վտանգաւոր սը-
խալ մ'է ենթադրել թէ մարդկային ըն-
կերութեան էական արժէքները խաչի
հետ երբեք յարաբերութիւն չունին։ Ա-
ռանց խաչի սկզբունքի՝ ընկերութիւնը
չի կրնար իր միութիւնը, հաստատու-
թիւնը տեւականացնել։ Ես համոզ-
ուած եմ որ խաչը՝ ընկերային կազմա-
կերպութեան և ընկերային շարժումին
հիմնական ճշմարտութիւնն է։ Քանզի
ընկերութիւնը առանց սիրոյ չի կրնար
իր գոյութիւնը պահել։

Սակայն երկու տեսակ սէրեր կան,
բնազգային սէր և անձնապետ սէր։ Բը-
նազգային սէրը կրնայ ինքզինքը ար-
տայայտել անձնասիրութեան մէջ, և
կրնայ մարդիկը առաջնորդել անզուսպ
կիրքի բոլոր չարիքներուն։ Մինչև որ
անձնասիրութիւնը չխաչուի, մինչև որ
տիեզերական գիտակցութիւնը, — այ-
սինքն այն գիտակցութիւնը թէ տիե-
զերքի սիրաւ Աստուծոյ գոյ է — մեր
մէջ «ես»ը չ'ապանէ՝ ընկերութիւնը
անկարելի կը դառնայ։

Պօղոսի կողմանէ պատկերացուած
Քրիստոսը բոլոր մարդկութեան պարտա-
քերը վճարող մէկն է, իբր թէ անոնք
իրը ըլլային։ Այս տեսակ բան մը ան-
հրաժեշտ է իսկական ընկերային կազ-
մակերպութեան համար։ Աստուծոյ
Թագաւորութիւնը տեւէ մէկ անդ իրա-
պէս չի հաստատուիր առանց այս խաչի
սկզբունքին գործելուն։ Քրիստոս կ'ը-
սէ որ երբ մէկը կ'ողզէ ետեւէս գալ,
թող ինքզինքը ուրանայ և իր խաչը
վերցնելով ինծի հետեւի։ Ես կ'ողզեմ
իմ խաչս վերցնել և Քրիստոսի հետե-
ւիլ։ Աստուծոյ Թագաւորութեան հիմ-
նական սկզբունքը այս խաչն է։

ԱՌԱՐԱՆԴԵԱԾ ԿԵԱՆՔԷՆ ՓՇՈՒՐՆԵՐ

1862 ին էր: Միայնակ նահանգներ ղռ մէջ ներքին պատերազմը կը շարունակէր. հարաւայիններու և հիւսիսայիններու բանակները կատաղիօրէն իրարու դձմ կը կռուէին:

Հիւսիսայիններու բանակին մէջ թնդանթաճիք վաշտի մը հարիւրապետըն էր 19 տարեկան Եէյլի մէյկ ռաանտըն: Անիկայ աղքատ ծնողքի մը պաւակն էր: Իր հայրենակիցները, որոնց հրամանատարն էր, իրեն նուիրած էին իր զինուորական գեղակերտ թուրը: Այնքան կը սիրէին զինքը:

Այս վաշտին մէջ կը գտնուէր Ճան Րինկ անունով զինուոր մը, որ իր տաւրիքով և մարմնական կազմով պատանիի մը կերպարանքը ունէր: Քոնուէլ, այսպէս կը կոչուէր հարիւրապետը, կռիւի խստութիւններէն զայն խնայելու համար իր քովը առած էր իրը ըսպասաւոր: Բայց այս մանկունակ զինուորը աննման սիրով մը փարած էր իր հայրենակից հրամանատարին:

Րինկ քրիստոնեայ էր, իսկ Քոնուէլ՝ անհաւատ կքամ ինքզինքը այդպէս ըլլալ կը կարծէր: Րինկ ամէն իրիկուն Ս. Գիրքը կը կարդար, և Քոնուէլ անոր կը խնդար: Բայց Րինկ հաւատարիմ էր իր Երուսաղէմի մէջ:

*Բակաւա ներկայիս աշխարհի մեծագոյն եւ ամենայաջող աւետարանիչներէն մէկն է. միւնխայն ատեն ձաբոնի մէջ ամէնէն շատ ձանջցուած եւ սիրուած բանաստեղծը, վիպասանը, ընկերային գործիչը եւ բարեկարգիչն է: Այս 43ը հազիւ անցած, տկար մարմնով եւ տեսողութիւնը գրեթէ կորսուեցուցած մարգարէաշունչ քրիստոնեան ձաբոնի մէջ կը զեկավարէ «Աստուծոյ թագաւորութեան Շարժումը» անուն աւետարանչական գործը, որուն նպատակն է բոլոր ձաբոնի երկիրը աւետարանականացնել: Հիմա կը գտնուի Մ. Նահանգներ Ե. Ք. Ջանիցի թ. համաժողովին մասնակցելու համար:

Օր մը հարաւայինները ուժգին յարձակում մը ըրին հիւսիսայիններու վրայ. վերջինները հապճեպով գետին անդիի կողմը ետ քաշուեցան, և թշնամիին յառաջացումը կասեցնելու համար կրակ տուին փայտէ կամուրջին:

Յանկարծ Րինկ ետ գնաց իր հրամանատարին վրանը. իր պետին թուրը հոն մոռցուած էր, զոր այնքան խնամքով փայլուն պահած էր միշտ: Թուրը առաւ և սուրաց դէպի կամուրջը, որ սակայն, աւաղ, բոցերու մէջ էր հիմա: Րինկ յանդգնօրէն սկսաւ ճեղքել բոցը. երկու կողմէն սաստկօրէն կը կրակէին: Յանկարծ հարաւայիններու բանակէն սպայ մը դուրս եկաւ ճերմակ թաշկինակ մը ճօճելով: Կրակը անմիջապէս դադրեցաւ:

—Ըսէ՛ք այդ տղուն որ հոս ետ թող գայ, պոռաց նա, և մենք զինքը տղատ պիտի թողունք:

Բայց բոցերու ճարճատիւնը Րինկի անխելի բրին այդ ձայնը: Ամէն ոք սարսափով կը դիտէր. և ընդհանուր ազդակ մը պոռթկաց երբ Րինկ կամուրջին ծայրը բոցավառ տեսուեցաւ: Ան ծանծաղ ջուրը ինկաւ. անզգայ վիճակին մէջ հիւանդանոց փոխադրուեցաւ:

Մէկ օր անզգայ մնաց հոն: Հարիւրապետ Քոնուէլ հիացկոտ և յուզումնալից անոր քովը կայնած կը դիտէր զայն: Րինկ անգամ մը միայն սթափեցաւ. թուրը իր քովը գտնելով ժպտեցաւ, դանիկայ գրկեց և կուրծքին վրայ սեղմեց, մի քանի բառեր փսփսաց և վերջին շունչը տուաւ:

Թուրին վրայ դրուած էր. «Ճշմարիտ բարեկամութիւնը յաւիտենական է»:

Քոնուէլ այդ օրէն սկսեալ նոր մարդ եղած էր: Անիկայ քրիստոնեայ եղաւ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻՆ ՄԷՋ ԲԱՐԵՓՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Յօդուածս գրողն է Ս. Բ. Ուրիշեմս անուն վաճառական մը, որ միևնոյն ատեն հոգեւոր գործով մեծապէս հետաքրքրուող սարկաւագ մըն է։ Երկար ատեն Կ. Դպրոցներու տնօրէն եղած է։ Իր այս յօդուածը Դսմիրիկէշը-նէլիսթ Թերթին 1931 Փետր. 19 ի թիւին մէջ հրատարակուած է։ Ծ. Թրգմչ.

«Իսկ այն իննը տ՞ւր են», (Ղուկ. 17.17)։ Եւ ինչո՞ւ իրենց եղած տեղը կը գտնուին։ Թէ՛ եկեղեցականը և թէ՛ աշխարհականը կը հարցնէ թէ ինչո՞ւ ու մանք եկեղեցի չեն դար։ Արդեօք եկեղեցիի մասին հետաքրքրութիւնը պակաս է, թէ ոչ եկեղեցիի մէջ բան մը պատահած է որ մարդերը կրօնքէն կը պաղեցնէ։

Այս հարցումներուն պատասխանը շատ ալ պարզ չէ։ Պատճառներէն մէկը կրնայ ըլլալ Մեծ Պատերազմը և անոր յաջորդող դէպքերը։ Ամէն մեծ պատերազմէն ետքը այս ինկածութիւնը տեսնուած է։

Ներկայ կրօնական, եկեղեցական անտարբերութեան պատճառը թերեւս ասկէ աւելի խոր է։ Կիրակիի գործածութեան մասին ժողովուրդին մօթին մէջ աստիճանական բայց տեւական փոփոխութիւն մը տեղի ունեցած է։ Մեր Տէրը ըսաւ. «Մարդը չարաթիւն համար չէ, այլ չարաթիւ մարդուն համար շինուեցաւ»։ Ասիկայ այնպէս կը մեկնեն թէ Կիրակի իբր թէ հանգիստի և զրօսանքի համար շինուած է։

Այսպիսի մեկնութիւնները անշուշտ եկեղեցիին հանդէպ քրիտոնեաներու տածած յարգանքին ազդելու չեն։ Կրօնական և աստուածաբանական գաղափարները պատճառ ըլլալու չեն որ կարգ մը մարդիկ ուրիշներու դէմ գըրգըռին, անոնց վրայ յարձակին, և զանոնք իբր հինգուիս, ինկած կամ հը-

պարտ դատապարտեն։

Կարգ մը մարդիկ այս վիճակը առժամեայ կը նկատեն արդէն։ Սակայն մեկնութիւնը ինչ որ ալ ըլլայ եկեղեցին դժուար և կենսական տալիսապի մը մէջէն կ'անցնի։ Այսօր եկեղեցի երթալու դէմ ընդհանուր հոսանք մը կայ։

Ես անձնապէս չեմ հաւատար որ ներկայ սերունդը իր նախորդէն նուազ կրօնասէր է։ Շատ մը մանրազնիւ փորձերէ ետքը համոզուած եմ որ մարդոց կեանքին հիմը կրօնքը կը կենայ։

Այս մասին լաւատես եմ, և կը խորհիմ որ ժողովուրդին եկեղեցի չյաճախելուն պատճառը եկեղեցական պաշտօններուն բնոյթին մէջ կը գտնուի։ Եկեղեցական պաշտօններու ձեւին մէջ վերջին մէկ դարու միջոցին փոփոխութիւն մը չէ կատարուած։ Ոմանք ծէսերու կարեւորութիւնն առած են, ուրիշներ՝ երգեցողութեան և նոյնիսկ վարձքով աշխատող նուագահար և երգիչներ վարձած են։ Բայց պաշտօնի յայտագիրը անփոփոխ մնացած է։ Աղօթք, փառաբանութիւն, երկու կամ երեք երգ, հովուական աղօթք, քարոզ, օրհնութեան աղօթք և վերջ։

Կարելի չէ՞ որ ներկայ սերունդը աւելի հրապուրելու և պաշտօնը շատերուն օգտակար ընելու համար յայտագրին մէջ բարեփոխութիւն մը ընենք։

Եկեղեցին՝ 150 տարի առաջ՝ ժողովուրդին ընկերային յարաբերութեան վայրն էր։ Կիրակին՝ բարեկամներու, ազգականներու, զրացիներու իրարու հետ տեսակցութեան համար էր։ Ժողովուրդը եկեղեցին տանող շարժառիթը քարոզէ աւելի ընկերային յարաբերութիւն էր։ Մեր մանկութեան ժամանակ Կիրակնօրեայ Դպրոցը կէսօրէ ետքը ժամը 1ին կը կը լմնար, քարոզը ժամը 2ին կ'սկսէր։ Եւ մէջտեղի ժամանակի

միջոցին մարդիկ իրարու հետ կը խօսակցէին, կը խնդային: Ասիկայ թէ՛ ծերունիին և թէ՛ երիտասարդին համար շատ թանկագին էր:

Վերջին յիսուն տարիներու միջոցին պարագաները և սովորութիւնները շատ փոխուած են, հետեւաբար մեր եկեղեցական պաշտօնի ձևերուն մէջ փոփոխութիւն մը պէտք է: Ուրեմն՝ ի՞նչ ընենք: աւելցնենք, պակսեցնենք: Քարոզը աւելի երկա՞ր թէ աւելի կարճ ընենք: Երաժշտութեան աւելի ժամանակ տանք՝ թէ ժողովուրդային երգեցողութեան, և կամ բառերու միջոցաւ քարոզի մասիկ ընենք և փոխանակ քարոզիչ կամ ճառախօս հրաւիրելու հովիւ հրաւիրենք:

Սակայն ուշ դիր որ վերջին առաջարկէն զատ ոչ մէկը հիմնական փոփոխութիւն մը կ'ենթադրէ: Ես կ'առաջարկեմ որ կրօնական դաստիարակութեան և ընկերային յարաբերութեան աւելի ժամանակ տրուի, այս երկու կէտերը միացնենք: Այս բաները լուրջ և խոր կերպով ուսումնասիրելէ ետքը սա համոզումն յանգեցայ թէ կրօնական պաշտօնի է՛ն կարևոր մասը կրօնական դաստիարակութիւնն է, և այս պատճառաւ ալ պաշտօնի ժամանակը երկընցընել պէտք է:

Շատեր, նոյնիսկ շատ մը եկեղեցականներ, եկեղեցին Կիրակնօրեայ Դրպրոցէն կը գատեն, և եկեղեցին աւելի կարեւորութիւն կուտան: Բայց իրականին մէջ Կ. Դրպրոցը եկեղեցիին մէկ մասն է և քարոզի չափ արժէքաւոր է:

Ինչո՞ւ այս երկուքը չմիացուի և հիմա գոյ չեղող բան մը, ընկերային յարաբերութիւնը, չաւելցուի: Այսօր շատ մը եկեղեցիներու մէջ մարդոց միջեւ ընկերային յարաբերութիւն չկայ:

Ամէն Կիրակի հիմակուանէն աւելի երկար պաշտօն թող կատարուի. բայց ձանձրանալի թող չըլլայ որպէսզի թէ՛

երիտասարդը և թէ՛ ծերը հրապուրէ: Պաշտօնի ներկայ պահը 20 վայրկեան թող երկարի, և այս պահը երկու ժամ 15 վայրկեան թող ըլլայ: Իսկ այս յաւելումը կարգ մը կարեւոր և ընդհանուր հարցերու խորհրդակցութեան տրուի:

Առաջարկուած յայտագիրը սա է.—

Ա. Սկսելու պահ՝ 15 վայրկեան, ժամը 10.45—11.00: Ընդհանուր հաւաքոյթ, ընդհանուր երգեցողութիւն, մանկանց երգչախումբին երգեցողութիւնը, աղօթք, ծանուցումներ, զաղար:

Բ. Պաշտամունքի պահ՝ 20 վայրկեան. ժամը 11.00—11.20: Զատբաժնի մը մէջ պաշտօն՝ սկսնակ Ա. և Բ. կարգերու. եկեղեցիի սրահին մէջ պաշտօն՝ պատանիներու, երիտասարդներու և չափահասներու:

Գ. Կրօնական դաստիարակութեան պահ՝ 35 վայրկեան, 11.20—11.55: Կանոնաւոր կարգ չունեցողներու զատ պաշտօն. ընդհանուր նիւթին հրապարակային խորհրդակցութիւնը, կամ զատ կարգերու մէջ խորհրդակցութիւն:

Դ. Գործնական պաշտօնի պահ՝ 20 վայրկեան, 11.55—12.15: Մանուկներու քարոզ կամ պատմութիւն Ա. և Բ. կարգերու մէջ, պատանեաց և երիտասարդաց երգ սորվեցնել, հոգեւոր պաշտօն, խորհրդակցութիւն կամ մասնախումբերու ժողով, բոլորին մասնակցութեամբ ընկերային յարաբերութիւն, ձեռքեր թոթուել, հաղորդակցութիւն, խորհրդակցութիւն:

Ե. Նուիրման պահ՝ 55 վայրկեան, որուն 25 ը քարոզի յատկացուած՝ 12.45—1.00: Ընդհանուր հաւաքոյթ (մանուկները կրնան բացառութիւն կազմել), մասնախումբերու տեղեկատուութիւն, կամ գործի վերաբերեալ հարցերու առաջադրում, երգ, աղօթք, քարոզ, վերջ:

Ամփոփեց

ՅԱԿՈԲ ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

Զահէ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Գրեց՝ ՓՐՈՅ. Զ. ՊԵՋՃԵԱՆ

Տագնապներու շրջանի մը մէջ կ'ապրինք: Տնտեսական, քաղաքական, կրօնական, ընկերային, գիտական և այլն, և այլն տագնապներ կան ներկայիս:

Մեծ պատերազմի պատճառաւ մարդկային կեանքի ամէն մարդին մէջ այնպիսի ռեժիմի գնացում մը տեղի ունեցաւ որ աշխարհս չի կրնար դիւրութեամբ խաղաղիլ և իր բնականոն վիճակը վերստանալ: Պատէրազմէ առաջ ալ թէպէտ կարգ մը շրջաններու մէջ տագնապը անպակաս էր, և սակայն երբեք այսօրուան չափ սաստիկ, խոր, արմատական և ընդհանուր չէր: Եթէ Գալիլիայի Մովսէս կամ Վանայ Լիճը փոթորկի՝ շատ չի տեսեր միջանի ժամուան կամ մէկ օրուան մէջ կը խաղաղի: Բայց ահագնածաւալ խաղաղական կամ Ատլանտիան օվկիանոսը եթէ իր հիմէն շարժի, եթէ իր հաւասարակշռութիւնը կորսնցնէ, օրեր, շաբաթներ, թերեւս տասներեք կը տեւէ մինչեւ որ ան իր նախկին խաղաղութիւնը վերստանայ: Շրջանակը որչափ ընդարձակ և շարժում մը որքան խոր ու սաստիկ ըլլայ, խաղաղիլն ալ այնքան ուշ և դժուար կ'ըլլայ:

Ներկայիս տիրող տագնապներուն մէջ, եթէ ոչ ամէնէն կարեւորը, անկասկած մեծագոյնը տնտեսական տագնապն է, որուն մասին ճշոր. Ա. Ետարեքի ընթերցողներուն ընդհանուր պատկերացումները թուութիւններ տալ չահեկանութենէ պուրկ չ'ըլլար: Հարցը շատ ընդարձակ է: Մենք անոր մասին շատ կարճ կ'երպով պիտի խօսինք:

Ա. ԻՆՉ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Բնականոն պայմաններու տակ՝ երկրի մը բոլոր տնտեսական գրադուսներուն միջև տեսակ մը ներդաշնակութիւն կը

գտնուի, անոր ներքին և արտաքին վաճառականութեան, ճարտարարուեստին և երկրագործութեան միջև տեսակ մը հաւասարակշռութիւն գոյութիւն կ'ունենայ: Երբ այս ներդաշնակութիւնը, այս հաւասարակշռութիւնը սաստկօրէն կը խանգարի տնտեսական տագնապ յառաջ կուգայ: Զոր օրինակ, եթէ մի քանի տարի տեւող երաշտութեան պատճառաւ երկրագործութիւնը մեծապէս կը վնասուի և հունձքերը շատ քիչ կ'ըլլան, կամ ներքին ապստամբութեան կամ խռովութեան պատճառաւ երկրին դրամական վարկը եթէ իջնայ, և կամ նոր մեքենաներու հնարուելովը, արտաքին մրցումի կամ ծանր մաքսերու պատճառաւ կարգ մը արհեստներ և գործաւորներ եթէ գործազուլի դատապարտուին, վերջապէս թղթադրամներու շրջաբերութեան մէջ դրուելովը կամ անոնց շատնալովը եթէ գիները արագ արագ փոփոխութեան ենթարկուին, մէկ խօսքով ուրիշ մէկ պատճառով կամ պատճառներով երկրագործութեան, արհեստներու և վաճառականութեան բնական հաւասարակշռութիւնը ուժգին կերպով սարսի, ներդաշնակութիւնը կորսուի, յառաջ եկած վիճակը կը կոչուի տագնապ:

Տագնապը՝ կրնայ ըլլայ տեղական, այսինքն մէկ երկրի մէջ սահմանափակուած, և կրնայ ըլլալ ընդհանուր, այսինքն մի քանի երկրներու կամ բոլոր աշխարհիս վրայ տարածուած: Աշխարհը մեծ շուկայ մըն է, ուր ամէն երկիր իր ապրանքը կը ներմուծէ, Բուսիա, Բումանիա, Աւստրալիա, Արժանթին, և ասոնց նման երկիրներ իրենց երկրագործական արտադրութիւնները և չգործուած աւաղանները, Անգլիա, Գերմանիա, Իտա-

լիա, Մ. Նահանգներ և նման երկիրներ իրենց գործարաններուն հազար ու մէկ տեսակ արտադրութիւնները, իսկ ուրիշ երկիրներ իրենց հանքային արտադրութիւնները, ոչխարի և արջառի նման անասունները և այլն վաճառքները այդ շուկան կը բերեն: Սովորական ժամանակներուն անոնց միջև ներդաշնակութիւն մը կը գտնուիր այց երբ յեղափոխութեան, պատերազմի, մաքսի և նման պատճառներու բերումով այս ներդաշնակութիւնը կը խանգարի՝ աշխարհային հրապարակին վրայ դրամական և տնտեսական տագնապ յառաջ կուգայ: Ահա այսօր միջազգային մեծ տնտեսական տագնապի մը առջև կը գտնուինք, «արսափելի անշահաբերութիւն մը և անգործութիւն կը տիրէ բոլոր աշխարհի վրայ: Ձկայ երկիր մը, պետութիւն մը որ ասկէ հազուի: Այսօր՝ Ասիայէ և Աֆրիկէէ գատ՝ միայն Եւրոպայի և Ամերիկայի անգործներուն թիւը 20 միլիոն կը հաշուուի: Անոնց ընտանիքներէն իւրաքանչիւրին երեքական անդամ աւելցնելով 60 միլիոնի ժողովուրդ մը յառաջ կուգայ, որ ուղղակի այս անգործութենէն կ'ազդուի: Հապա անուղղակի կերպով վնասուողներու թիւը հարիւրաւոր միլիոններու կը հասնի: 1929 ի աշունը Մ. Նահանգներու մէջ պատահող ծանօթ սակարանային անկումը պատճառ եղաւ որ Ամերիկեան հրապարակը «արսափելի կերպով սարսի: Այս ցնցումին ազդեցութիւնը շուտով զգալի եղաւ Եւրոպական հրապարակին վրայ: Նախ այնպէս կը յուսացուէր որ այս տագնապը կարճատեւ պիտի ըլլար: Բայց ընդհակառակը ան երթալով սաստկացաւ, ընդարձակուեցաւ և Եւրոպայի, Ասիոյ, Հար. Ամերիկայի, բոլոր աշխարհի վրայ տարածուեցաւ: Եւրոպական հրապարակը վերջերս կարգ մը քաղաքական, տնտեսական, ազգա-

յին ազդակներու պատճառաւ շատ նուրբ և դիւրազգաց վիճակ մը ստացած էր արդէն: Ձգտեալ վիճակը շատ զգալի էր: 1929 ի Ամերիկեան տագնապը սաստիկ երկրաշարժի մը նման դիւրսւկըցաւ կործանել Եւրոպայի շատ մը դրամական և տնտեսական հաստատութիւնները, սրունք արդէն քիչ շատ խարխուլ էին: Պատմութեան մէջ այսչափ ընդարձակ և ընդհանուր տնտեսական տագնապ մը չեմ մտաբերիր:

Մենք՝ Սուրիա գտնուողներս՝ ուրիշներու բաղդատմամբ այս ընդհանուր տագնապէն ամէնէն քիչ ազդուողներն ենք: Ո՛չ երկրագործական մեծ արտադրութիւններ, ո՛չ մեծ գործարաններ և առևտրական ընկերութիւններ ունինք որ շատ ազդուինք: Աղքատութեան մէկ բարիքը կը վայելենք: Ըստորին յարկի վրայ բնակողը ինչալէն չի վախնար: Կինզբերորդ, տասներորդ, յիսուներորդ յարկը բնակողները թող վախնան:

Մեծ պետութիւններու մէջ այս համաշխարհային տագնապէն բաղդատմամբ ամէնէն քիչ ազդուողը Ֆրանսան է, ասոր պատճառներն են Ֆրանսայի քաղաքական կացութիւնը, գինուորական ոյժը, պատրաստ ոսկիի քանակին մեծութիւնը և այլն: Այսուհանդերձ ան ազդուած է, կ'ազդուի, և եթէ տագնապը շարունակէ աւելի պիտի ազդուի:

Այս տագնապին մտահոգիչ պարագան սա է որ երբեք կարիլի չէ զուակել թէ անիկայ ե՛րբ և ի՛նչպէս պիտի վերջանայ: Քանզի փորձագէտներու համար տակաւին անծանօթ է թէ զանիկայ յառաջ բերող կարգ մը յայտնի պատճառները ե՛րբ և ի՛նչպէս կրնան վերցուիլ: Հարցին վտանգաւոր կէտը հաս է:

Այս տագնապին կարգ մը պատճառներուն մասին յառաջիկային պիտի խօսինք:

ԳԻՒՐՏԻՍՏԱՆԻ ԱԻԵՏ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ Ղ. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Գ. ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ
ԳՈՐԾԱԽՈՐՆԵՐ

Առաջին 7 գործաւորներէն զատ աշխատեցան յետագայք ես արդիւնաբեր ծառայութեամբ՝ հակառակ իրենց թերի կրթութեանց։

1. Պր. Յովհաննէս Մէլիքեան՝ Բլէսիէն, Սբ. Կարապետ վանքին ձայնաւոր տիրացուն, երկար տարիներ չըլիկ զըրազմառ, աւետարանիչ եղաւ՝ ամէն կողմեր յոյժ յարգուելով։

2. Մղ. Ղուկաս Տըպնէի մէջ ցկեանս եռանդուն և հաւատարմօրէն քարոզեց։

3. և 4. Յովսէան Սէլպոյիան և Յովհ. Սաչատուրեան Թիւ և Բլէսի աշխատեցան և նահատակուեցան։

5. Արարատ Թովմասեան Բլէսիի մէջ ջերմեանդօրէն քարոզեց, ապա Տէրեք ձեռնադրուելով հոն զօրծեց և նահատակուեցաւ։

6. Յակոբ Մէլիքեան ալ իւր վերջին չըլիկ աւետարանիչ Բիւրտիստանի, յոյժ սակաւիկ ուսման տէր, այլ ձայնաւոր ու եռանդուն, մի քանի տարիներ պտըտելէ վերջ կառավարութենէն ձերբակալուելով բանտարկուեցաւ և արձակուեցաւ տարի մը յետոյ՝ երբ արդէն Հայոց տեղահանութիւնը դադարած էր։ Քանի մը ամիս ալ Տիգրանակերտի մէջ գաղտնաբար տունները կը պտըտէր ճըշմարտութեան և մխթարութեան խօսքը քարոզելով։ Օր մ'ալ ինծի հկաւ երբ ես տակաւին խցիկիւ մէջ պահուած էի. ուրախութեամբ ըսաւ. «Կը յուսամ որ քիչ օրերէն ես Աստուծոյ խօսքը քաղքիս լիբան և Մարտինոս դռները ազատ և համարձակ պիտի քարոզեմ թշնամեաց...» մինչդեռ այդ գիշեր հնտախտէ բռնուելով իր բաղձանքը իր մէջը խցեց։

դուած ընդ փոյթ զնաց իր պաշտած Փրկչին քով։

7. Պր. Պետրոս Ամիրխանեան՝ ինքնաշխատութեամբ լիովին հմտացած թրքերէն, արաբերէն և մասամբ մ'ալ պարսկերէն լեզուներու՝ քանի մը տարիներ աշխատեցաւ Ռնովանու և Սլիվանու մէջ, միանգամայն Տէր Ղազարեանին հետ թարգմանչութեամբ պարապելով։ Սլիվանու մէջ կը կնքէ մահկանացուն։

Վերոյիշեալներէն զատ բաւական թիւով ուրիշ երէտաւարդներ Ռնովանէն և Սլիվանէն գացին Խարբերդ կարգաւու, ումանք լիաւարտ, ումանք թերաւարտ կարգաւով կ'անցնին Ամիրիկա՝ շատերը առանց ուշադրաւ հետք մը թողելու իրենց սպասող հայրենիքին մէջ։

Անոնցմէ մին Յ տարիներ Սլիվանու մէջ դպրոցին և եկեղեցիին տառնորդեց. ձեռնադրուելէն ետքը անցաւ Տիգրանակերտ Անդղ. թարգմանի աստիճանին։ Ասոր ձեռնադրութեան ներկայ էր Մարաշէն եկող Վեր. Աւետիսը, որը ըսաւ. «Ինչ որ ականջով մեզի անհաւատալի կ'երեւար, հիմա պիտի երթամ պատմելու թէ աջօքս տեսայ Գրտերէն լեզուով հոգեւոր պաշտամունք (ընթերցում, քարոզութիւն, երգ և աղօթք) կատարուիլը»։ Փրոֆ. Մելքոնն ալ (Լիփրատ Գուլէճի) ըսաւ. «Ես ասկէ 50 տարի առաջ Պարսկաստանէն ասկէ անցայ Խարբերդ երթալու, հասնիքան փոքր ու աննշան գիւղ մըն էր որ կը վախնայիք առաջարկել թէ գիշեր մը մեզ հոս կ'ընդունին. մինչ հիմա այսքան գեղեցիկ ու բազմամարդ քաղաքը մեզի անհաւատալի կ'ուզայ թէ այդ աննշան գիւղն էր»։ Այդ թարգման հովիւը հիմա Ամիրիկա է իր ընտանիքին հետ։

Ուրիշ երկտասարդ մը, որդի թարգմանիչ Ամիրխանեանի, լոկ տարի մը աշխատեցաւ Սլիվանու մէջ. գնաց խարբերդ, ամուսնանալով և ձեռնադրուելով հոգարձաւ և 5 տարիներ գործեց Տիգրանակերտ, վերջին քանի մը տարիներն ալ խարբերդի մէջ, ապա որբանոցին հետ մագապուրծ ազատելով անկէ գնաց ուղղակի Ամերիկա և ուրիշ յարանուանական եկեղեցիի մէջ գործեց:

Վեր. Յովսէփ Մէլլիքեան՝ որդի զբաղման Յովհ. Մէլլիքեանի, լրացնելով խարբերդի Դոլէճը և Մարաշի Աստուածաբանական ճեմարանը և հոն ամուսնանալով՝ կ'անցնի խարբերդ ձեռնադրուելու և զստնալով հայրենիքը (Սիվան) գործելու և հոն նահատակուելու իր սիրական տիկնոջ և զաւակաց հետ:

Պատ. Պետրոս Պողոթեանն ալ Քլէսիին մէջ աշխատեցաւ հաւատարմաբար և հոն նահատակուեցաւ խիստ անգթօրէն իր սիրական կնոջ և զաւակաց հետ:

Ղազար ալ տտեն մը խարբերդու դաշտին մէջ — Բազմաշէն, Մօրէնիկ և Բալու — դաստառու քարոզիչ ըլլալով՝ գնաց հայրենիքը իր հօրը դաշտավայրերը գործելու և իր թողած Սբ. Գրոց կարգ մը մասերը և բազմաթիւ Քրտ. երգեր թարգմանելով, վեց տարիներ ալ Տիգրանակերտու կուսակալութեան մէջ մինչեւ խարբերդու, Պիթիսու և Մարտինու սահմանները չըջիկ Աւետարանիչ — զբաղման ապտեղէն յետոյ՝ Զի-

նադադարին ատեն մ'ալ Տիգրանակերտու թափուր բեմին և Հայնի մնացած բեկորներուն հոգ. մխիթարութիւններ տալով՝ 3 ամիսներ ալ չէյի Սայիտի բանակին մէջ պահուած մագապուրծ կ'ազատի և կ'անցնի ընտանեօք Հալէպ:

Գ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐ

Առաջին անգամ Քիւրախտանի դաշտին մէջ կարեւոր տեղ մը գրաւեց Բընտվան, իր շէն, հռանդուն և խաղաղիկ եկեղեցիով և կանոնաւոր դպրոցով, ուրկէ ելլող աշակերտներ ուղղակի խարբերդի վարժարանը կը մանէին իրր ճարպիկ և յառաջագէմներ:

Բնովանի եկեղեցին վերջի 20, 25 տարիներու մէջ մօտաւորապէս 40 հազար զրուչի հոգեւոր տուրք տուաւ, և աղքատաց ալ՝ աւելի քան 15,000 զրուչ:

Բնովանէն յետոյ Սլիվանի մէջ Ֆարդին և Քլէսի եղան խոստմնալից և ընդարձակ վայրեր: Ասոնց զխաւոր հիմնադիրները եղան Վեր. Գ. Ապլահատեան, Պատ. Պ. Տէր Ղազարեան և Պետրոս Էֆ. Ամիրխանեան, որոնք պարբերաբար իրարու կը միանային Սլիվան, Տիգրանակերտ կամ խարբերդ, իրենց թարգմանած մասերը սրբագրելու և մագուրի քաշելու և կ. Պոլիս ղրկելու:

Ստորեւ կը դնենք ամբողջ Քիւրախտանի Աւետ. դաշտին միջին հաշիւը. —

Վայր	տուն	եկեղեցի	դպրոց	աշակերտ	երկցատուն	պաշտօնեայ	դաստառ	անձ
Բնովան՝	60	1	1	80	1	1	2	150
Քանդա՝	5	—	—	—	—	1	—	10
Թիւլ՝	30	1	1	60	—	1	—	100
Ֆարդին՝	30	1	2	80	1	1	2	100
Քլէսի՝	30	1	1	60	1	1	1	150
Բօրիթ՝	10	1	1	40	—	1	—	30
Հալաա՝	15	1	1	60	—	1	—	60
Հազրօ՝	5	1	1	50	—	1	—	15
Հէճ՝ վէժօփուս՝	15	1	1	50	—	1	—	60

ՖՈՐՏԻ ԳՈՂՏՆԻՔԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Ֆորտի մտքի աշխատանքին մասին լաւ գաղափար կուտայ իր սա խօսքը. «Այն որ չի կրնար խորհիլ կըրթուած մարդ մը չէ, հոգ չէ թէ ան որչափ գոլէճական տխուրօտներ ունենայ: Խորհիլը ամէնէն դժուար գործն է զոր ուէ մարդ կրնայ ընել»: Ֆորտ հաճօքի համար ծոյլ ընթերցումը կը պախարակէ ըսելով. «Մենք կը կարգանք խորհիլէ խոյս տալու համար... գրքի հիւանդութիւնը ներկայ դարուս մէկ ակտն է»: Ֆորտ իր այս կարծիքը, որ որոշ չափով ճշմարտութիւն կը պարունակէ, չափազանցութեան կը տանի երբ կ'ըսէ թէ «Ես գիրք կարդալ չեմ սիրեր, անոնք իմ միտքս կը խանգարեն»: Էտիսըն ընդհակառակը միշտ և մեծ ընթերցող մըն է:

Ֆորտի գեղապիտական ճաշակն ալ չէ վարդապած, զբօսանքներէն ալ հաճօք չ'զգար, երբ պտոյտի ելլէ կ'ուզէ բան մը ընելով վրադիլ. երբ գետերը կը գիտէ անիկայ կը հետաքրքրուի հասկնալով թէ անոնք որչափ ոյժ կրնան արտադրել: Բայց Ֆորտ իր առողջութեան մեծապէս հոգ կը տանի մասնաւոր մարզանքներով, չափաւոր ուտելով, գրգռիչ բաներէ բոլորովին զգուշանալով:

Ֆորտի ընտանեկան յարաբերութիւնը քաղցր և գուրգուրալի է. իրեն համար իր մօրը յիշատակը շատ նուիրական է: Իր խոստովանութեան համեմատ իր մայրն էր որ ամէնէն աւելի իրեն օգնած և իրեն ձեռն առած էր: Իր կընոջ հանգէպ մեծ վստահութիւն ցոյց կուտայ, և անկէ մեծապէս կը ներշնչուի: Ֆորտի ընտանեկան յարաբերութիւնը իր լաւագոյն վիճակին մէջ է երբ ան մանուկներու հետ կը խաղայ: Անոնց հետ գետինը կը նստի, անոնց

խաղալիքներ կը շինէ և պատմութիւններ կը պատմէ:

Այս գործի, աշխատանքի մարդը միեւնոյն ատեն գաղափարապաշտ մէկն է: «Անոր միտքը կը հասնի մինչեւ այն սահմանները որոնք շատ տարբեր են իր ձեռքերուն շոշափած և իր ոտքերուն կոխած տեղերէն», բայց իր բոլոր գաղափարականներուն մէջ անիկայ կը ցուցնէ մեծ անկեղծութիւն: Զանոնք իրականացնելու մէջ անիկայ անվատ աշխատող մըն է: Էտիսընի նման անիկայ ձախողանքը կը մերժէ ճանչնալ: Զախողանքը յաջողութեան ճամբուն վրայ կամուրջ մըն է: Ֆորտ վախըն ալ կը նկատէ քաջագործութեան մահացութիւնը: «Վախը՝ հոգիին վրայ գերիշխանութիւն ստացող մարմինն մէկ արտադրութիւնն է» կ'ըսէ ան:

Ֆորտ կը հաւատայ որ եթէ մէկը չի յաջողիր յանցանքը մեծապէս իրենն է: Անիկա լաւատէս մըն է: Այս սուհանդերձ ան կ'զգայ թէ իր յաջողութեան մէջ կայ խորհրդաւոր բան մը, գաղտնի բան մը որ ամէն ինչ երջանիկ վախճանի մը կ'առաջնորդէ:

Ֆորտ բարեպաշտ է. անիկայ հաւատարիմ մնացած է իր մօրը ուսուցումներուն. միշտ եկեղեցի կ'երթայ, Ս. Գիրք կը կարդայ, կիրակին կը պահէ: Անոր Աստուածը՝ գործի Աստուած մըն է, որ եթէ զիշեր ցորեկ չի գործեր տիեզերքը պիտի խանգարուէր և պիտի անհետանար:

Ահա կարճ կերպով պատկերը Ֆորտին, զոր մեզի կը ներկայացնէ Պրէտ-Ֆորտ:

Տ. Ճ. Խ.

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Պերլինի մէջ 2,600,000 վոյդ ուժ ունեցող Բ. ճառագայթներ արտադրուեցան, որոնք կրնան մէկ հարտա թանձր կապարին մէջ թափանցել: Այս Բ. ճառագայթին խողովակը ապակիի տեղ ձգողախէժէ և մետաղէ շինուած է, և մօտ 12 օտք երկար է: Այս ճառագայթները պիտի ծառայեն բնագիտական հետազոտութիւններ և բժշկական դարմանումներ կատարելու:

Ելեկտրականութիւն արտադրող մեքենաներու համար փոխանակ ջուրի շոգիի՝ սնդիկի շոգի կը գործածուի, որը շատ լաւ արդիւնք յառաջ կը բերէ:

Թէքսասի մէջ խորունկ անձաւ մը պիղուեցաւ ուր երեւան ելան նախապատմական հնդկական ցեղի մը հետքերը: Քարայրը պարեխներով ամրափակուած էր, որուն ներկայ բնակչութիւնը կը կազմեն թունաւոր օձեր, կարիճներ, առնէտներ և այլն: Քարայրը ահագին քանակութեամբ տիղմ կը պարունակէր որուն հանուելէն վերջ երեւան ելան օրօրոցներ, սակառներ, առարկաներ և մէկ մանուկի մարմին: Եւրոպական ինչքի ունէ հետք երեւան չեղաւ, որով՝ կ'եզրակացուի թէ այս ժողովուրդը Եւրոպացւոց հետ չփաման մտած չէ:

Փրօֆէսոր Կիւթեմպերկի նոր տեսութեան համեմատ աշխարհէս 50 միլոն բարձրութեան վրայ ջերմութիւնը 1000 և 2000 ֆարէնայթ աստիճաններու միջև կը գտնուի: Ինք այս վարկածը սահման վրայ կը փաստէ թէ՝ մթնոլորտին բաղադրութիւնը ամէնուրեք միևնոյն է:

Սթոքհոլմի մէջ երկու գիտնականներու կողմէ կատարելագործուեցաւ պլզինձէ այրող հայելի մը, որ փոխանակ արեւի՝ ելեկտրական ճառագայթները կը ցոլացնէ կեդրոնի մը վրայ: Այս կերպով 3600 աստիճան ջերմութիւն մը կը ցան արտադրել, որուն տակ չորս ու կէս վայրկեանի մէջ սպիտակ ոսկին հալեցաւ:

Գերմանիոյ Եէնա քաղաքին մէջ փուռեր շինուած են որոնք արեւի տաքութիւնը կը գործածեն: Այս փուռերու մէջ բնածուլը 5400 աստիճան ջերմութեան տակ հալած է:

Բժիշկ Պուլլըր երկտրատիւ փորձերէն յետոյ գտաւ թէ կարճատեսութիւնը անյարմար սնուցման արդիւնքն է:

Վիտուն մը կը հաղորդէ թէ՝ երկունման պողպատ կտորներու կարծրութեան տարբերութիւնը գտնուելու լաւագոյն կերպն է՝ նոյն կտորները մագնիսական դաշտի մը մէջ դնել և դիտել թէ ո՞ր կտորը աւելի ելեկտրամագնիսական կարողութիւն կ'ունենայ:

Յորդանան գետին վրայ երեք ելեկտրականայաններ պիտի շինուին 46000 ձիու ոյժ ունեցող ելեկտրականութիւն արտադրելու համար: Ասիկայ պիտի բաւէ Պաղեստինի ամէն քաղաքին, աւանին, երկրագործական գաղութներուն պէտքերը գոհացնելու համար: Այս կայաններէն առաջինը շինուած է Ճիսրէլ Մուճամէի վրայ 18000 ձիու ոյժով: Պաղեստին՝ իր այս ելեկտրականայաններով, քարիւղի Մուսուլ-Հայֆա ենթամուղով և Մեռհալ Ծովի հանքային հարստութեամբ արդիական երկիր մը ըլլալու ճամբուն վրայ է:

ԻՆՁ ՈՐ ՃԻՇԴ ԻՆՇԻ ՊԵՏՔ Է

Հոգևոր գործիչ մը ձիով ճամբորդու-
թենէ հոքը տունը կը վերադառնար։
Տունը չհասած իրիկուն հզաւ, մշուշ մը
պատեց չորս կողմը և իր ճամբան կոր-
սընցուց։ Զիտն հրասանը անոր վիզը
նետեց և ըսաւ. «Տէ՛ր, իմ քաղերուս
դուն տաւջնորդէ։»

Պա՛շ մը թափառելէ հոքը մօտակայ
աղօտ լոյս մը տեսաւ և հոն ուղղուե-
ցաւ։ Քիչ վերջը ան գիւղացիի մը տան
առջեւ կը կենար։ Դուռը դարկաւ և
փոքր աղջիկ մը բանալով գայն ներս օ-
ճախին քովը նստեցուց։ Աղջիկը տը-
խուր դէմքով յայտնեց թէ քովի սենեա-
կին մէջ իր մայրը հիւանդ կը պատկի և
թէ ան մեռնելու մօտ է։

«Կուզե՞ս զի՛ւ անոր քովը տանիլ»,
հարցուց աղջիկին, որուն հաստա-
կան պատասխանին վրայ անոր ընկե-
րակցութեամբ ներս գնաց։

Տէրոջ պաշտօնեան հիւանդին անկող-
նին վրայ ծռելով մի քանի անգամ
կրկնեց սա համարը. «Աստուծոյ սրղ-
ւոյն, Յիսուսի Քրիստոսի, արիւնը ա-
մէն մեղքէն մեղ կը սրբէ»։ Նախ այն-
պէս կը թուէր թէ հիւանդը ըստածնե-
րուն կարեւորութիւն չէր տար։ Բայց
յանկարծ ըսաւ. «Ո՛վ Տէր, ճիշդ ասի-
կայ է այն որուն հա պէտք ունիմ, ինչո՞ւ
մինչև հիմա տսիկայ ինծի չյայտնե-
ցիք»։

Քիչ հոքը անոր դէմքը տարբերե-
րեցով առաւ։ Անիկայ ժպտաղէմ կը
կրկնէր իր լսած համարը, կենաց խօս-
քը, և մերթ ընդ մերթ կը շարունակէր
ըսել. «Այս խօսքը իմ պէտքս, այո իմ
է՛ն խոր կարօտութիւնս ինչպէ՛ս կը գո-
հացնէ»։

Շրթներուն վրայ այս ուրախու-
թեան բառերը կը թրթռային տակաւին
կրք ան յաջորդ օրը իր շունչը աւան-
դեց, և իր հոգին դէպի փրկչին գնաց,

զինքը որ իր մեղքէն սրբած էր։

Կ'ուզեմ հարցնել ընթերցողներուս
թէ իրենց յոյսերը Յիսուսի վրայ դրած
են։ Յաւատենական կեանքը շահելու
համար այս է միակ ճամբան։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱ-
ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Հալէպի մէջ 1929ի միջոցին 32.8
սանթիմէթր, իսկ 1930ի միջոցին 43.42
սանթիմէթր անձրեւ իջած է։

Այս տարի ցորենի, գարիի նման
ցանքերը անցեալ տարուանէն 10 տո-
հարիւր պակաս հունձք տուած են։
Բայց Պաղեստինի, Թուրքիոյ, Թունի-
զի և Ալժէրիի մէջ արմաթքը պէտք ե-
ղածէն պակաս ըլլալուն պատճառաւ
գինիերու մէջ բարձրացում մը կարելի է
ակնկալել։ Պաղեստին և Թունիոյ
արմաթքը սկսած է արտածուիլ։ Ար-
տածումներու համար որոշուած 100ին
մէկ տուրքը ջնջուած է, մեծ ուրախու-
թիւն պատճառելով վաճառականներու։

Հալբի սակարանին մէջ բամպակի
գինը պզտիկ բարձրացում մը ունեցած
է։ Անցեալ տարի Հալէպ և շրջակայնե-
րը 8000 հակ (պալիս) բամպակ արտա-
դրուած է, իսկ այս տարի՝ 15000 էն պա-
կաս չ'ենթադրուիր։

Հալէպի արտածումին գլխաւոր ապ-
րանքն է բուրգը, որ մեծ մասամբ Ամե-
րիկա կը զրկուի։ Նախապահ Հուլի
ձեռք առնելիք միջոցներուն շնորհիւ
բուրգի գինին մէջ բարձրացում մը կ'ու-
կնկալուի։

Պաղեստինի կառավարութեան հետ
կատարուած համաձայնութեան համե-
մատ ձէթը անանց մաքսի հոն պիտի
ներածուի։

Այս տարի պիստակի հունձքը շատ
քիչ ըլլալուն պատճառաւ անոր գինին
մէջ մեծ բարձրացում մը տեղի ունե-
ցած է։

Կալուածներու արժէքները նորէն պնահատելու համար նոր գնահատ մարմին մը որոշուած է: Կալուածատուրքը այս վերջին գնահատումին համեմատ պիտի որոշուի:

Սուբիոյ մէջ մասին մէջ որոշուած է գործածել չափի և կշռի մէթրակտի գումթիւնը: Հին չափերը կշիռները գործածութենէն պիտի դադրին:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՐԱՐ

Երկրագործները մեծ տաղնապի մասնուած են: Անոնց այս կացութիւնը արդիւնքն է մէկը աւելի բազմակընճիւ ազգականերու: Երկուսն կիսնքէ զժգո՛ւ ազարակապանները, զիւրացիները զէպի քաղաքները կը խուժեն նոր բարդութիւն մ'ալ աւելցնելով քաղաքներու մէջ տիրող տաղնապալի կացութեան վրայ:

Բայց ներկայիս երկրագործական տաղնապին մեծագոյն պատճառը տընտեսական է: Ահագին աշխատանքի, դրամի, ոյժի վատնումով յառաջ բերուած հունձքը աշխարհիս հրապարակին վրայ զրամ չ'ըներ: Այս պարագան երկրագործին գնելու կարողութիւնը մեծապէս կը պակսեցնէ, որ իր կարգին ճարտարութեան վրայ աւերիչ ազդեցութիւն մը կ'ունենայ:

Հանրի Ֆորտ ներկայիս իր բոլոր ոյժով նուիրուած է այս հարցը լուծելու, երկրագործները և հետեւաբար անուղղակի կերպով ճարտարութեանը փրկելու համար: Անիկայ հիմա Տիյրպուրնի իր ագարակին մէջ գիտական փորձերով զբաղած է:

Ֆորտի երազն է հողագործութիւնը և ճարտարարութեանը իրարու հետ սերտ յարաբերութեան մէջ դնել: «Հողագործի արտադրութեան մեծագոյն մասը ուտեստեղէն է, անոր արտադրութեան

մէկ պզտիկ մասը միայն ճարտարարութեան մէջ կը գործածուի: Միւս կողմէն հողագործը իր բոլոր բաներուն համար ճարտարարութեան կախում ունի: Դարձեալ՝ հողագործին մշակութեան կերպերը շատ սուղ են: Ամերիկայի մէջ շատ բարձր գինով հողի պարարտացուցիչ կը գործածեն», կ'ըսէ Ֆորտ: Հետեւաբար ան փորձեր կը կատարէ սա երկու ուղղութեամբ: Նախ շատ աժան գինով, մէկ թոնօն մէկ երկու տուար արժէքով, պարարտացուցիչ չինիլ, և երկրորդ ուտեստեղէնէն զատ ճարտարարութեան համար անհրաժեշտ նիւթեր արտադրել երկրագործութեամբ:

Ֆորտի քիմիագէտները փոշիացած ածուխի և բորակային նիւթերու բաղադրութեամբ նոր պարարտացուցիչներ կը պատրաստեն:

Երբ Ֆորտ յաջողի այս աժան պարարտացուցիչը գտնել և անոր շնորհիւ սովորականէն առատ հունձք արտադրուի յառաջ կուգայ երկրորդ հարց մը, այս աւելորդ առատ հունձքով ի՞նչ պէտք է ընել: Հիմա երկրագործները ունին կամ հրապարակին մէջ կայ ահագին քանակութեամբ ամբարուած արմտիք, զոր օրինակ ցորեն, որ գնող չըկայ:

Ֆորտ կ'ըսէ. «Երկրագործութիւնը հիմա առատ արտադրութիւն ունի, որուն պէտք չկայ, և ճարտարարութեան ալ իր կարգին յաճախ աւելորդ անդործ մարդկային ոյժ ունի: Այս երկուքը զիրար կրնան դարմանել զարմանալի կերպով: ...Ներկայիս մենք երկրագործի արտադրութիւնը միայն ուտելու համար կը գործածենք: Պրագիլի խահուէն խմելէ զատ ուրիշ նպատակի չենք կրնար գործածել: Կամ Ամերիկայի ցորենը ուտելէ զատ ուրիշ նպատակի չենք կրնար ծառայեցնել:»

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԴՈՐԾԸ

ՄՐԱԳԻՐ ԿԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԵՂԱԽՈՐՄԱՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԼԱՅՆՈՐԷՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ

Միութեան Բարեգի ընդհանուր Տնօրենութեան մեզի որոշած պաշտօնական գրութեան կը փաղեմք։—

1. Մեր նախորդ զեկոյցներով արդէն ծանուցած էինք Տ. Գ. Կիւլպէնկեանի անձնական բարձր յարաբերութեանց և ալ զուգի միութեան ընդհանուր համաձայնութեան ժընէվի մէջ վերջին անգամ կայացած որոշումը, այսինքն Յունաստանի շուրջ 5000 գաղթականներու վիճակին բարելաւման մասին արժատական կարգադրութիւն մը, և Սուրիոյ շուրջ 15000 անապատաւ գաղթականներուն վերջնական տեղաւորումը, նորակերտ գիւղերու մէջ, առաւելելն մինչև 1933 տարուան վերջը։

Կեդրոնական Վարչական Ժողովը, որ իր վերջին մի քանի նիստերը մասնաւորաբար այս կարեւոր հարցին խորհրդակցութեանց նուիրեց, 22 Յունիսի նիստին մէջ վճռականօրէն որոշեց այդ ծրագրին ամբողջութեանը համար տրամադրել պահանջուած նիւթական մասնակցութիւնը, 14000 անգլ. ոսկիի գումար մը, առանց որուն Յունաստանի գաղթականներու մասին ոեւիցէ կարգադրութիւն անհնարին պիտի ըլլար, իսկ Ազգերու Ընկերութեան հովանիին տակ Սուրիոյ մէջ կատարուող տեղաւորման գործը պիտի ընթանար գանդաղ և կիսկատար, երկար տարիներ տեւելով։ Կեդրոնական Ժողովը, իր նախագահին հանդէպ երախտագիտական ըզգացումով մը համակուած, խանդավառօրէն որդեգրեց այս գործնական ծրագիրը։

Կեդր. Վարչ. Ժողովը սիրայօժար կառչեցաւ սոյն ազգագուտ ծրագրին, որպէս մեր ազգին մասնակցութեան բաժինը փրկութեան զեղեցիկ գործի մը։ Առ այդ պիտի բաւէր հետեւել մեր սիրելի նախագահին օրինակին, որ այդ նպատակին համար 400 000 ֆրանքի գումար մը տրամադրեց։ Նոյնպէս, փութացին արձանագրուել Տիւրքիոյ Նոյեմի Գափամահեան, Առաքել Պէյ Նուպար և Վահրամ Պէյ Նուպար 50000 անգլ. ոսկիի գումար մը, որով յանձն առնուած գումարին կէսը գրեթէ ապահովուած է։

Վերոգրեալ 14,000 ոսկիի գումարին մաս կը կազմէ նաև նախապէս ծանուցուած 1500 ոսկին որ պիտի ծառայէ Սուրիոյ մէջ «Բարեշէն» գիւղի կառուցման։

Կեդրոնական Վարչական Ժողովը վերոգրեալ որոշմնագիրը, Տ. Գ. Կիւլպէնկեանի կողմէ ստորագրուած, քանի մը օր առաջ վարիչ-պատուիրակ Տ. Մալէպեան ժընէվի մէջ անձամբ յանձնեց քարտուղար Մր. Ճօնսընի, ի բացակայութեան նախագահին։

2.—Կեսարիոյ 25 որբերուն Պէյրութ փոխադրութեան վիզան վերջնականապէս մերժուած ըլլալով, հակառակ այդ ուղղութեամբ քանի մը ամիսէ ի վեր կատարուած աշխատանքներուն, հաճոյքով կ'արձանագրենք թէ նախագահ Տիւար Գ. Կիւլպէնկեանի կողմէ կատարուած անձնական գիւմուսի մը վրայ, Սուրիոյ Բարձր Դոմիսէր Մ. Բօնսօ անմիջապէս արտօնած է այդ որբերուն մուտքը։

3. — Նոյնպէս Իրազի մէջ հարկ տեսնուած ըլլալով երկրին նոր օրէնքներուն համաձայն կառավարութեան վաւերացումը ձեռք բերել մեր Միութեան համար, Տ. Գ. Կիւլպէնկեանի խնդրանքին վրայ Իրազի Լոնտոնի դեսպան Ճաֆէր Փաշա պէտք եղած յտնձեռարարութիւնները ըրած է Պաղատաւ, ուզուած արտօնութիւնը զիւրացնելու համար:

Բարիկ, 29 Յուլիս 1931

ՎԵՐՋԻՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ պատճառաւ Հայաստանի ազէտեալ գիւղացիներուն համար 45 նոր գիւղեր պիտի շինուին մէկ ու կէս միլիոն օսմ. ոսկի ծախքով. քննուած 65 դպրոցներուն համար ալ 150,000 օսմ. ոսկի ծախք կ'ենթադրուի:

Կ. ՊՈԼՍՈՅ Կեդրոնական Վարժարանի տնօրէնը Տիար Պ. Ատրուներն, Անգարայի Կրթական գործադարութիւնէն նամակ մը առած է, որով կը խնդրուի միջնակարգ դպրոցներու թուաբանական ծրագրի մասին իր թեւադրութիւնները հաղորդել նոյն գործադարութեան:

ԴՈՒՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ Իբրեւորոյն կազմակերպեալ թեմ Ռումանիոյ գաւառներէն նախարարութեան կողմանէ մինչեւ հիմա պաշտօնապէս չէր ճանչցուած: Անցեալ տարի թէպէտ թեմական կանոնադրութիւն մը նախարարութեան կողմանէ վաւերացուած էր, բայց գործադրուելու համար պէտք էր մասնաւոր օրէնքով մը թոյլատրուէր իբրեւ թեմ կազմակերպուելու: Այս անգամ հայասէր Վարչապետ Փրոֆ. Ն. Ետեկայի շնորհիւ երեսփոխանական ժողովէն և Յուլիս 14ին Մերակոյտէն թեմական կանոնադրութիւնը պաշտօնապէս ընդունուած է: Ռումանիոյ Հայ գաղութը Եւրոպայի ամէնէն հին գաղութներէն է. Ժ. Գ. դարու առաջին կէսին շինուած եկեղեցիներ ունի:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻԻԹԱՐԵԱՆ Միաբանութեան ընդհանուր արքահայր ընտրուած է Գիւր. Հ. Մեսրոպ Վ. Հայպոզեան: Ծընած է 1887ին Խոտարշուր, 1898ին մըտած է Մխիթարեան Միաբանութեան մէջ. մեծ մասով զբաղած է Միաբանութեան տնտեսական և վարչական գործերով, ունեցած է թարգմանութիւններ օտար բանասիրական գրութիւններէ:

ԱՐՄԱՆ ԹՕՔԱԹԵԱՆ Վիեննայի ԸԾթաթս Օմերայի թատրոնին մէջ թենոր երգած է և խանդավառօրէն ծափահարուած ու «Նոր Քարուզօ» կոչուած է: Աւստրիոյ Նախագահը ներկայ գտնուած է:

ԿԻՊՐՈՍԻ Մեկգոնեան հաստատութեան առաջին շրջանաւարտներէն 7 աշակերտներ Պիրէոն հասած են, ուսկից Հայաստան պիտի մեկնին համալսարանական կրթութիւն ստանալու համար:

ԼԻԲԱՆԱՆԷՆ անցեալ տարի 5060 իսկայս տարի 2260 հայեր արտասահման գաղթած են:

ՔԻՍՍՊԻ հայ Աւետ. երիցիտան քարկոծման և Վեր. Ե. Քասունիի հրաժարման առթիւ Հալէպէն պատուիրակութիւն մը՝ բաղկացեալ Վեր. Հ. Հ. Րիկզէ, Վեր. Ա. Շիրաճեանէ և Տաքթ. Ա. Ճէպէճեանէ՝ Քէսոպ գնաց և Օգոս. ճին իր պաշտօնը լրացնելէ ետքը Հալէպ ետեկաւ: Կը յուսանք յաջորդ թիւով աւելի տեղեկութիւն տալ:

ՓԱՐԻՋԻ Հայ Ուսանողներու Միութիւնը որուն կ'անդամակցին համալրասարանի և բարձր դպրոցներու 51 ուսանողներ, Յուլիս 4 ին այս տարուան ուսումնաւարտ հայերու ի պատիւ թէյասեղան մը սարքած է: Ճրանսացի աշակերտներ ևս հրաւիրուած են, կը զբօսէ Le Foyer թերթը:

Ե. Ք. ԶԱՆԻՑԻ ԷԶՐ

«ՔՈՒ ԱՆՈՒՆԴ ՍՈՒՐԲ ԸԼԼԱՅ»

Իսրայէլի մէջ Անուն մը կար որ ոչ ոք կրնար համարձակիլ արտասանել: Ան Հին Կտակարանին մէջ 6823 անգամ յիշուած է. սակայն ընթերցողը երբ որ այդ Անունը գար ուրիշ բառ մը կ'արտասանէր կամ ուր պահիկ մը կը լռէր և ապա կը շարունակէր իր ընթերցումը: Օտարական մը կրնար զգալ այդ լռութեան մէջ խոր յարգանք հանդէպ այդ Անունին:

Ժամանակին Պաղեստինի մէջ ապրեցաւ մէկը որուն ոչ ոք կրնար հաւատարիլ ազօթելու մէջ: Ազօթքը իրեն համար բնագոյ մ'էր: Օր մը իր աշակերտները իր քովը եկան և խնդրեցին որ իրենց ազօթել սորվեցնէ: Իր սորվեցուցած այդ զարմանալի ազօթքին հօթը խնդրանքներէն առաջինը սա էր «Քու Անունդ Սուրբ ըլլայ», այդ Անունը զոր իսրայէլացիները չէին համարձակել արտասանել, այդ Անունը որուն առջեւ սերտվբէներ կ'աղաղակեն անգագար «Սուրբ, Սուրբ, Սուրբ է զօրաց Տէրը», այդ անունը որ ամէն Անունէն վեր է:

Արդեօք այս գարուն մէջ նո՞ւազ պէտք կայ յարգանքի զգացումին: Քանի որ մենք աւելի զարգացած ենք միթէ պէտք չունի՞նք յարգելու այդ Անունը: Ինչու չառիւր պարապ տեղ կը առնեն այդ Անունը իրենց բերանը, կը ծաղրեն Ս. Գիրքը և ուրիշ ինչ որ Սուրբ ու նուիրական է: Հապա ի՞նչ ըսենք այն երկատասարդ և երկատարդուն հիներուն որոնք Աստուծոյ Տան մէջ անպատկառ նստած քով թիթեւսօլիկ խօսք ու ժպիտներով կը ծաղրեն այդ Անունը: Միթէ իր Արարիչը չի յարգողը կրնա՞յ յարգել իր ծնողքը և իրմէ

մեծերը: Ո՛հ, յարգանքի հոգւոյն մենք կարօտ ենք, շատ կարօտ, յարգանք այդ Անունին որ է զօրութիւն անսահման, իմաստութիւն անչափելի մէր անհուն և կեանք յաւիտենական:

ԵՍԹԷՐ ՏԷՐ ՄԿՐՏԻԶԵԱՆ

ԻՄ ԵԿԵՂԵՑԻՍ

Իմ եկեղեցիս՝ ես աշխարհ չեկած ծնողներուս տուաւ կեանքի և սիրոյ գաղափարականը, որով իմ ծննդավայրըս սիրոյ և գեղեցկութեան զրախտ մը եղաւ:

Իմ երախտալութեանս միջոցին իմ եկեղեցիս էր որ զիս մկրտեց Քրիստոսի անունով եւ նուիրեց Անոր:

Իմ եկեղեցիս ճոխացուց իմ մանկութիւնս՝ պատմութիւններով, երգերով և կեանքի դասերով:

Պատանեկութեանս փոթորիկալից շրջանին՝ իմ եկեղեցիս քննադրեց իմ հոգւոյս աղերսը, առաջնորդեց իմ հաւքերս՝ ուղղելով զիս դէպ ի վեր:

Երբ առաջին անգամ իմ սիրտս անծանօթ սիրոյ արթնութիւնը զգաց, իմ եկեղեցիս ինձի սորվեցուց ուղղել և զսպել իմ կիրքերս: Ան իմ ամուսնութիւնս սրբացուց և իմ տունս օրհնեց:

Երբ տրամութիւնը պատէր իմ հոգիս, արեւը աներեւութանար ամպերուն հտեւ, իմ եկեղեցիս էր որ զիս կը առաջնորդէր բոլոր յոգնածներու Բարեկամին և ականջս ի վար կը փսփստար ուրիշ օրուան մը յոյսը, յաւիտենական և անարտասուք:

Երբ իմ քայլերս սայթաքէին և մեղքին դառնութիւնը զգայի, իմ եկեղեցիս էր որ կարեկցութիւնով ինձի կը մօտենար և պաղատելով զիս կը հրաւիրէր հաւատարիմ ըլլալու իմ գաղափարականիս:

Այժմ իմ եկեղեցիս է որ ինձի կը օգնէ դաստիարակելու իմ սրտի հա-

տորներս գուարթ, անբիծ և քրիստոնէական կեանքի համար:

Իմ եկեղեցիս կը պահանջէ ինձմէ հաւատարմութիւն և ծառայութիւն: Եւ ես պատրաստ եմ օգնելու Անոր, որ պէսզի Նա կարենայ ընել ուրիշներուն ինչ որ ըրած է ինծի: Պիտի օգնեմ իրեն որպէսզի կենդանի հաւատքի ջահը բարձրացնէ և վառ պահէ:

ԱՆՈՐ ԶԱՅՆԸ

Երբ խոր վիշտեր գան նեղել զիս
Լըռութեան մէջ իմ սենեակիս,
Ստուերներու մեղմ հպումին,
Անոր ձայնը ես կը լսեմ:

Լուսնակ գիշեր երբ իջնեմ ձոր,
Թաւուտքին քով կամ խորն անոր,
Մայրիներու ճոխ սուլոցէն
Անոր ձայնը ես կը լսեմ:

Երբ բարձրանամ սարերն ի վեր,
Զոր կ'ողջունեն բիւր զով հովեր,
Մայր բընութեան երգին հետ մեղմ,
Անոր ձայնը ես կը լսեմ:

Լըռութեան մէջ իմ սենեակիս,
Երբ խոր վիշտեր գան նեղել զիս,
Կ'զգամ թէ, ա՛հ, ցաւն է վըսեմ:
Զինոյն ձայն է որ կը լսեմ:

Սոփոգ-Օյուզ

ՎԱՀԱՆ

ԱԻՆԼԻ ԱԶՔԱՌՈՒ ԲԱՆԸ

Անգամ մը բանաստեղծ մը և նկարիչ մը երիքովի կոյրին բժշկութիւնը պատկերացնող նկար մը վը գիտէին: «Աս նկարին մէջ քեզի համար ամէնէն աչքառու բանը ո՞րը կը թուի», հարցուց նկարիչը: «Թիսուսի քով համախմբուող մարդոց գէմքի արտայայտութիւնները» պատասխանեց բանաստեղծը: «Ես ամէնէն աչքառու բանը ուրիշ տեղ մը կը գտնեմ» ըսաւ նկարիչը, «կը տեսնե՞ս այդ տան տատի-

ճաններուն քով մէկ կողմ նետուած գաւազանը»: «Այո» ըսաւ ընկերը, «Սակայն այդ լինչ կը նշանակէ»: Նըկարիչը շարունակեց. «Այս կոյրը այնքան վստահ էր իր բժշկութիւնն որ կըրցաւ իր գաւազանը մէկզի նետել»:

Յաւալի է որ շատ մարդիկ իրենց յոյսերը կը դնեն իրենց գաւազաններուն վրայ փոխանակ Յիսուսի:

ԴՊՐՈՑԻ ՄԸ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏԱԽՏԱԿԻՆ ՎՐԱՅ ՀԵՏԵԻՆԱԼԸ ԳՐՈՒԱԾ ԷՐ

1.—Լեզուս պիտի զսպեմ. թոյլ չը պիտի տամ որ կոշտ և պիղծ բառեր ելլէ բերնէս:

2.—Բարկութիւնս պիտի զսպեմ երբ մարդիկ և պարագաները զիս դժգոհացնեն, մինչեւ իսկ երբ անիրաւութեան դէմ բարկանամ, կամ ստախոսութեան հակառակիմ, դարձեալ անձա պիտի զսպեմ:

3.—Խորհուրդներս պիտի զսպեմ: Թոյլ չպիտի տամ որ յիմար փափաք մը իմաստուն նպատակ մը աւերէ:

4.—Վարուելակերպս պիտի զսպեմ: Չգոյշ և աշխատասէր և իրաւունքը և ճշմարիտը ընելու մէջ հաստատամիտ պիտի ըլլամ:

5.—Երբեք չպիտի ծաղրեմ, ուրիշի մը պատիւը չպիտի արատաւորեմ: Պիտի պահեմ իմ արժանապատուութիւնս և պիտի օգնեմ ուրիշներուն որ իրենցը պահեն: ՏԻԿ.Ա.Վ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ԾԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ 4-1931 ՅՈՒՆԻՍ 31. Շարունակութ.

Պրն. Արտաշէս Թորոսեան 16 զրուշ (կերպաս), Պրն. Արամ Ծորփօղլուեան 56 զրշ. (կերպաս), Պրն. Լեւոն Բիւրքճեան 64 զրշ. (կերպաս), ՏԻԿ. Ռահէլ Բիրպեան 20 զրշ. (կերպաս.), (Շար.)